

Ա. Առաջնային նշանակության մեթոդներ⁴.

1. Սուրբգրային ուսումնասիրության ավանդական մեթոդներ - ա. **պարմաքրականական մեթոդ** (Historical-grammatical criticism). Այս մոտեցումն ավելի շուրջ մի ձև է, և ոչ թե մեթոդ սուրբգրային մեկնիչների համար: Հիմնական նպատակն է վերհանել տվյալ սուրբգրային դրվագի կամ պատմի բառախմբաստանային նշանակությունը (քերականական)՝ համապատասխանեցնելով հեղինակի ժամանակաշրջանի առանձնահատկություններին (պարմական): Իբրեւ մեթոդ՝ այն նախ և առաջ մի նախազգուշացում էր նախառեֆորմացիոն շրջանում այդքան շարք տարածված քմահաճ և կամակարար այլաբանական մեկնությունների դեմ: Օրինակ, այլաբանական մեթոդի համաձայն, «Երուսաղեմ» բառն աղերսվում է հավաքավոր քրիստոնյա համայնքի հետ, այնինչ պարմաքրականական մեթոդն առաջին հերթին փորձում է վերհանել քաղաքի պատմական, քաղաքական, սոցիալ-մշակութային, աստվածաբանական առանձնահատկություններն Իսրայելի պարմության և Հին Կտակարանի մեջ: Այսպիսի մոտեցումը բավական համոզիչ և ճշմարտանման է թվում, սակայն պետք է նշել նաև, որ այս մեթոդի չափազանցված կիրառումը կարող է այլաբանական շարք արժեքավոր մեկնություններ և բացատրություններ կորցնելու տեղիք տալ: Օրինակ, Ծննդ. Ա 26-ում հոգևակի «մենք»-ի կիրառությունն Աստծո պարագային եկեղեցու հայրերի կողմից մեկնվել է Սուրբ Երրորդության խորհրդի լույսով: Պարմաքրականական դպրոցի ներկայացուցիչներն այս պարագային կհերքեին նման մեկնության վավերականությունը՝ պարմաբանելով, թե Ծննդոց գրքի հեղինակն այդ ժամանակաշրջանում չէր կարող Սուրբ Երրորդության մասին իմանալ, չնայած որ հոգևակիի կիրառության մասին այս պատմի վերաբերյալ որևէ հստակ մեկնություն չկա: Այս պարագային պետք է միայն նշել, որ քիչ հասկանալի դեռ չի նշանակում սխալ կերպով հասկանալ: Նամենայն դեպս, պարմաքրականական մեթոդի կիրառությունը համամասնաբար ընդունված է մեկնաբանական ուսումնասիրություններում և Սուրբ Գրքի ժամանակակից մեկնություններում՝ պայմանավ, որ այն երբեք չհարաշահվի⁵:

բ. **Բնագրաքննություն** (Textual criticism)⁶. այս մեթոդի նպատակն է պարզել պարմաքրականական մեթոդի առարկայի՝ *բնագրի* բնույթը: Գիտենք, որ Աստվածաշնչի որևէ գրքի բնագիր մեզ իր վավերական, այսինքն՝ ինքնագիր կերպով չի հասել: Նուագույն երբայական բնագրերը թվագրվում են -Բ. ա. Բ դարով՝ մեզ հասած միայն պատրաստիկներով, իսկ

4 Առաջնային և երկրորդական մեթոդների բաժանումը կապված չէ այս կամ այն մեթոդի կարեւորության կամ ընդգծված առաջնայնության հետ: Սույն բաժանումը նպատակ ունի պարզապես կարեւորելու սուրբգրային բնագիրը՝ ըստ այդմ առաջնային տեղ հարկադրելով այն մեթոդներին, որոնց ուսումնասիրության շրջանակն անմիջականորեն կապված է Աստվածաշնչի բնագրի հետ:

5 Տե՛ս David J. Clines, նշվ. աշխ., էջ 28:

6 Տե՛ս O. H. Steck, Old Testament Exegesis, A Guide to the Methodology, translated by James D. Nogalski, Atlanta, 1998, էջ 38-46: Նախնական գրականության համար տե՛ս նաև E. Tov, Textual Criticism of Hebrew Bible, Minneapolis, 2001², Arie Van Der Kooij, Textual Criticism, in J. W. Rogerson, Judith M. Lieu (ed.), The Oxford Handbook of Biblical Studies, Oxford University Press 2006, էջ 579-591, J. C. Gertz (Hg.), Grundinformation Altes Testament, Vandenhoeck & Ruprecht, Göttingen, 2006, էջ 38-54:

Աստվածաշնչի ամբողջական բնագիր մեզ է հասել Թ. Խ. ԺԱ դարից միայն: Աստվածաշնչային բնագրերը, մեծ խնամքով արագրվելով, դարից դար են անցել: Նեոց այս փոխանցման գործընթացի ճիշտ վերականգնումն է մեզ տալիս ամենալավ և ամենահավանական սուրբգրային բնագիրն ստանալու հնարավորություն: Այս առումով բնագրաբնությունը կարող է ամենաճշգրիտ գիտությունների թվում դասվել՝ իր խիստ և օբյեկտիվ կանոններով ու հստակ կանխագծված գիտական մոտեցմամբ: Սակայն հարկ է նշել, որ բնագրաբնությունը նաև մեկնության մի ձև է, որովհետև ի վերջո մասնագետն ստիպված է լինում այս կամ այն կերպ ընկալություն կատարելու և իմաստային առումով հիմնավորելու փոխյալ բնագրի ու նրա տարբերակների առաջարկած ընթերցումների միջև⁷: Ամենահայրնի օրինակներից է Ծնունդ, Դ-8-ի դրվագը, որտեղ երբայական բնագիրն ունի «Եւ Կայենն ասաց իր եղբորը»: Սակայն երբայական բնագիրը չի նշում, թե ինչ ասաց Կայենը: Նույնպես թարգմանությունը, սամարիտական բնագիրը, լատինական Վուլգատան և երկու-երեք արամեական թարգմանություններն ալստերն ունեն «Արի՛ գնանք դաշտ» արտահայտությունը: Բնագրաբնության մեթոդի առաջարկած կանոնների համաձայն երբայական բնագրի դեմ իրար հետ համաձայնող հույսերն թարգմանությունը և սամարիտական բնագիրն այդքան էլ կարևոր չեն՝ նախապատվություն ստանալու համար: Ահա այստեղ արդեն մասնագետն ստիպված է որոշելու՝ արդյոք երբայական բնագիրը պահպանել է նախնական տարբերակը, թե՛ հնագույն թարգմանություններն ի վերջո իրավունք ունեն հավելում կատարելու՝ հաշվի առնելով իմաստային կատարյալ համապատասխանությունը: Շատ հաճախ շեշտվում է, որ բնագրաբնությունը կառուցում է այն հիմքը, որի վրա հենվում է մեկնություն-էկզեգերիկան: Սակայն բերված օրինակը հստակ ցույց է տալիս, որ շատ դեպքերում բնագրաբնությունն էլ կարող է մեկնության մի ձև դառնալ:

զ. Խմբագրաբնություն (Redaction criticism). «Խմբագիր»-ը սուրբգրային ուսումնասիրությունների ոլորտում տարածված մի եզր է, որ այսօրվա հասկացողությամբ կարող է «հրատարակչին» համարվել համարվել⁸: Այս եզրի ծագումը կապված է այն մտայնության հետ, ըստ որի՝ չորս ավերարանների հեղինակները ոչ թե իրենք են գրել, հեղինակել, այլ ավելի շուտ հավաքել և խմբագրել են արդեն գոյություն ունեցող բանավոր կամ գրավոր նյութը: Այսօր արդեն, երբ սուրբգրային հեղինակներն ավելի շատ ընկալվում են իբրև հրատարակիչներ՝ իրենց անձնական մոտեցումներով, կարծիքներով, պեսությունների ստեղծմամբ, «խմբագիր» եզրը կորցնում է իր երբեմնի նշանակությունը: Ավելի նպատակահարմար է այս պարագային օգտագործել գերմանական ծագում ունեցող *Tendenz kritik* հասկացությունը, այսինքն՝ այն մեթոդը, որն արտահայտում է հեղինակի դիրավորությունները⁹: Մեթոդի հիմնական նպատակն է բացահայտել հեղինակի՝ աղբյուրներն օգտագործելու դիրավորությունը և եղանակը: Իրականում խմբագրաբնությունը պարմաբերականական մեթոդի մի արտահայտությունն է: Սակայն նրա հիմնական նպատակն է, ի տարբերություն պար-

7 Տե՛ս David J. Clines, նշվ. աշխ., էջ 30:

8 Տե՛ս David J. Clines, նշվ. աշխ., էջ 31:

9 Տե՛ս O. H. Steck, նշվ. աշխ., էջ 76-93:

մաքերականական մեթոդի, բացահայտել ամբողջական երկի և դրա հեղինակի դիպավորություններն ու բնագրի հետ կապված աշխարհադրությունները:

2. **Գրական մեկնության մեթոդներ**¹⁰ - ա. «մերձընթերցում» (close reading). այս մեթոդի առաջացումը կապվում է նախևառաջ Անգլիայում ի հայտ եկած գրական-քննադատական Նոր դպրոցի ներակայացուցիչների և նրանց բարձրագույն սրբազանությունների հետ¹¹: Մեթոդի նպատակն է բնագրի մանրամասն, հնարավորին չափ «մերձակա, մոտիկից» ընթերցումը՝ վերհանելով բոլոր բառերը, ոճը, պարկերները, փոխաբերությունները և այլն: Պարսկական չէ, անշուշտ, որ այս մեթոդի հիմնական նյութն աստվածաշնչյան պոեմներն են, ինչպես օրինակ Օսեեի գրքի Բ գլխինը՝ նվիրված Յահվելին և նրա անհավաքարիմ կնոջը՝ Իսրայելին: Այս պոեմում առկա են հարկացուցիչներ՝ իմ կինը, նրա ամուսինը, նրա երեխաները, նրանց մայրը ևն, որոնք հստակ մատնանշում են պոեմում գերիշխող պարկերայնության գաղափարը: Այս ամենը բացահայտելուց հետո մնում է որոշել, թե ինչ բնույթի պարկերայնություն է այն՝ բացասական, թե՞ դրական: Սակայն սա դեռ չի նշանակում, որ հիմնականաբար բոլոր պոեմներն էլ կարող են նման վերլուծությամբ միևնույն արշինով չափվել: Յուրաքանչյուր բնագիր պահանջում է մերձընթերցման իր ձևն ու մոտեցումը:

բ. Գրական սրբազանության գաղափարը. կարևոր է հիշել, որ Հին Կտակարանը, իր առանձնահատկությամբ հանդերձ, գրական մի երկ է¹²: Եւ իբրեւ այդպիսին՝ այն պետք է և ավելի արդյունավոր կերպով կարող է ուսումնասիրվել՝ հաշվի առնելով ժամանակակից գրականագիտության նվաճումները: Հին Կտակարանը, գրական առումով, բաղկացած է հիմնականում արձակ և չափածո ձևերից¹³: Գրական սրբազանության գաղափարին հետևելով՝ երկու հիմնական մոտեցում պետք է առանձնացնել.

ա. գրական երկը պետք է ամենից առաջ գնահատվի իբրեւ մի ամբողջություն.

բ. այն պետք է ուսումնասիրվի իբրեւ այդպիսին՝ շարքից շեղադրելով երկի սրբազան պարմական հանգամանքները:

ա. Այս առաջին շեղադրումն առաջ եկավ անկախաբար՝ խմբագրաքննադատության զարգացման հետ միաժամանակ: Նրա հիմնական մոտեցումն է ըմբռնել և հասկանալ պոեմն իր ամբողջության մեջ: Սույն մոտեցումը բազմիցս հերքվել է սուրբգրային ուսումնասիրություններում՝ նախապարվությունը միշտ պաշտվելով կառուցվածքային մեկնություններին: Ամբողջական ընկալման գաղափարն ավելի սերտորեն կապվում է մերձընթերցման մեթոդին: Առանց դրա մերձընթերցման մեթոդն ինքնին կենթադրի մի բաժանարար, բաղադրյալ մասերով մեկնելու փորձ՝ ջանալով ինչքան հնարավոր է ավելի մանր մասերի, պոմմների

10 Այս մեթոդի մասին ավելի մանրամասնորեն տես **J. C. Gertz** (Hg.), նշվ. աշխ., էջ 42-45: Գրական մեկնության մեթոդի ամենանշանավոր արարատվությունները գրում ենք հետևյալ երկերում՝ **R. Alter**, *The Art of Biblical Narrative*, Basic Books, New York, 1981, նույն հեղինակի մի այլ մեկնության ֆրանսերեն թարգմանությունը՝ *L'art de la poésie biblique*, traduit de l'anglais par Christien Leroy et Jean-Pierre Sonnet, Lessius, Bruxelles, 1999:

11 Տես **D. Jobling**, *Methods of Modern Literary Criticism*, in Leo G. Perdue (ed.), *The Blackwell Companion to the Hebrew Bible*, Blackwell Publishers 2001, էջ 19-35:

12 Հին Կտակարանի՝ իբրեւ գրական երկի ժանրային դիպավորման համար տես **D. Brent Sandy & Ronald L. Giese Jr.** (ed), *Cracking Old Testament Codes, A Guide to Interpreting the Literary Genres of the Old Testament*, Nashville, Tennessee, 1995:

13 Անդ, էջ 13:

բաժանել մեկնվող երկը: Սուրբգրային այս կամ այն երկի ամբողջական պատկերը մեկնության մեջ պետք է վերջին, եզրակացնող խոսքը լինի: Իմաստի, պարզամի փնտրություն այս գաղափարի վերջնական նպատակն է: Ընդ որում, այս մոտեցմամբ ավելի րեսանելի է պարզ է դառնում ամբողջի ու մասերի հարաբերակցությունը, քվյալ գրական երկի մասերի դասավորվածությունն իր ամբողջության մեջ:

բ. Երկրորդ մոտեցման համաձայն, սուրբգրային երկը պետք է ընթերցվի այնպես, ինչպես որ այն հղացվել է, այսինքն՝ եթե չափածո, ապա չափածոյի պես, եթե պարոմ, ապա պարոմին համապատասխան ընթերցմամբ: Այս մոտեցումը մի նոր հեղափոխություն առաջ բերեց սուրբգրային մեկնության մեջ: Եթե նախկինում ուսումնասիրողները խիստ անհրաժեշտ է պարզադիր էին համարում երկի պարմական համարները՝ նրա իմաստն ու պարզամբ հասկանալու համար, ապա այս մեթոդի ի հայտ գալով շեշտն ավելի դրվեց երկի րեսակի է բովանդակության վրա: Օրինակ, Ամոսի կամ Միքիայի մարգարեությունները հասկանալու համար անհրաժեշտ է պարմահատարակական համարները մասին մեկ-երկու բավական ընդարձակ ծանոթագրություն, այնինչ Նոբի կամ Նովմանի գրքերը հասկանալու համար դժվար թե դրա կարիքը լինի. այդ գրքերն արդեն այն են, ինչ արդա-հայրում է նրանց պարզամբ ընթերցողին:

Բ. Երկրորդական նշանակության մեթոդներ

ա. **Պարմաքննություն** (Historical criticism)¹⁴. Սուրբ Գրքի մեջ նկարագրված պարմներն ունեն խիստ ընդգծված պարմական համարներ, ուստի միանգամայն արդարացի է որոշ ուսումնասիրողների պահանջը՝ սուրբգրային պարմների վավերականությունը պարմության մեջ սրուգելու համար: Այս առումով, Ասրվածաշունչը նաև պարմության մի հրաշալի սկզբնաղբուր է, է նրա առանձնահատուկ կողմերից շարերը կապված են առ պարմությունն ունեցած սերտ աղերսների հետ: Օրինակ, Նին Կրակարանի մասնագերներին շարերը նաև փայլուն պարմարաններ են, է, օգրագործելով Թագավորաց գրքերը, նրանք կարողացել են վերականգնել Իսրայելի պարմությունը է դերը Նին Մերձավոր Արևելքում¹⁵: Մակայն պետք է միշտ հիշել, որ Սուրբ Գիրքը մեկնելու համար՝ ի շահ հավարացյալ հոգու է աշխարհի փրկության, երբեք չենք կարող այն իբրև պարմական ձեռնարկ օգրագործել: Ներուարար, պարմաքննության բուն նպատակը սուրբգրային բնագիրը հասկանալն ու մեկնելը է, այլ դրա միջից քվյալ ժամանակաշրջանի պարմական նկարագիրը վերհանելը: Անշուշտ, մեթոդն օգնում է Նին Կրակարանը մեկնելուն, բայց միայն ու միայն՝ անուղղակիորեն:

¹⁴ Մեթոդի պարմության համար րեն **Jean Levie**, *La Bible: Parole humaine et message de Dieu*, Desclée de Brouwer, Paris-Louvain, 1958:

¹⁵ Այս առումով հիշարակության արժանի են Kenneth Kitchen-ի դասախոսությունները՝ *Old Testament in its Context*, 1-6, «Theological Student's Fellowship Bulletin» 59-64, 1971:

բ. Սկզբնաղբյուրների քննություն (Source criticism)¹⁶. մեթոդի հիմնական նպատակն է վերականգնել ոչ թե հինկարակարանյան պարմական իրադարձությունների ընդհանուր պարկերը, այլ այդ իրադարձությունների համար հիմք ծառայած սկզբնաղբյուրները: Վերջիններս բանավոր եւ գրավոր բնույթի են, սակայն սկզբնաղբյուրների քննության մեթոդը հիմնականում զբաղվում է գրավոր աղբյուրների ուսումնասիրությամբ: Սուրբգրային հեղինակներից քչերն են նշում իրենց սկզբնաղբյուրը, ինչպես օրինակ Նեսու Ժ 12-13-ում, Թվոց ԻԱ 14-ում, իսկ ավելի մանրամասն նկարագրությամբ՝ Գ. Թագ. ԺԱ 41-ում: Սկզբնաղբյուրների քննության մեթոդը մեծ նպաստ է բերել հայրկապես Նեգամապյանի չորս հիմնական աղբյուրների, ինչպես նաև Երկրորդօրինական դպրոցի գրական գործունեության վերահաման ճանապարհին: Ներկայումս, կարելի է նշել, որ այս մեթոդը մեծապես նպաստում է Աստվածաշնչի գրական քննադատությանը՝ ճիշտ կողմնորոշելով երկի տեսակն ու սեռը:

գ. Ձևաքննություն (Form criticism)¹⁷. Ձևաքննության գլխավոր սկզբունքն է բացահայտել եւ վերհանել Իսրայելի գրավոր ավանդության երեսուն կանգնած բանավոր ավանդության ձևերն ու տեսակները եւ համակարգել դրանք ըստ համապատասխան ժանրերի: Ըստ այս մեթոդի՝ բանավոր այս ավանդություններից շատերը հայտնի զարգացման շրջան են անցել եւ իրենց յուրահատուկ կացութաձեւն (գերմ.՝ Sitz im Leben) են ունեցել ժողովրդի կյանքում: Այս մեթոդի կիրառումը հայրկապես արդյունավետ է եղել Մադմոսաց գրքի պարագային, երբ յուրաքանչյուր սաղմոս՝ գոհաբանական, փառաբանական եւն, իր տեղն է գտել, շնորհիվ այս մեթոդի, Իսրայելի պաշտամունքային պարմությունը վերականգնելու ճանապարհին: Ձևաքննության շնորհիվ է, որ բացահայտվել են սուրբգրային բանավոր ժանրերը՝ սաք, վեպ, սագա եւ այլն (տե՛ս, օրինակ, Դավ. Թ. 8-15):

դ. Բնագրի փոխանցման պարմական ուսումնասիրության մեթոդ (The Transmission Historical Approach)¹⁸. Բնագրի քննության պարմության մեջ էական դերակատարություն ունի Տին Կրակարանի բնագրի անգիր կամ բերանացի պարմվող վիճակից անցումը դեպի գրավոր, խմբագիր կարգավիճակ: Ընդ որում, այս գործընթացի մեջ կարևորվում են այնպիսի արտերևույթներ, ինչպես օրինակ՝ փոքր միավորների առկայությունը բանավոր-անգիր եւ գրավոր խմբագրված նյութերի միջև: Նշված երևույթի ի հայտ գալը մյուս կողմից դիտարկվում է իբրեւ երկրորդական մի գործընթաց, որովհետեւ այն հայրկապես բնորոշ էր ծիսապաշտամունքային եւ դրանից ածանցված գրական-մշակութային ոլորտներին՝ աղոթասացություն, իմաստասիրական դպրոց, բանավոր ասմունք, մարգարեական «ճառ», պատմություն: Այս պարմառով շատ հաճախ բնագրի փոխանցման ընթացքը գերադասելի է բնորոշել երկու հիմնական գործընթացներով՝ փոքր, բանավոր միավորներից անցում դեպի ավելի մեծ, կանոնակարգված, խմբագրված եւ գրավոր ժողովածուի: Ավելին, այս փոքր միավորներն ունեցել են բանավոր խոսքի փորձարարական դերակատարություն: Սույն մեթոդը վերաբերում է հիմնականում հնագույն գրավոր տեքստի վերադարձ դեպի նախնական, անգիր դպրության ձևավորում եւ զարգացում: Ըստ այսմ, այս պարմական փոխանցման

16 Տե՛ս **Johannes P. Floss**, Form, Source and Redaction Criticism, in J. W. Rogerson, Judith M. Lieu (ed.), The Oxford Handbook of Biblical Studies, էջ 591-615:

17 Տե՛ս **Martin J. Buss** (ed.), Biblical Form Criticism in its Context, JSOT, Supplement Series 274, Sheffield Academy Press, 1999:

18 Տե՛ս **O. H. Steck**, նշվ. աշխ., էջ 63-74:

պարմության ուսումնասիրությունն ու ճշգրտումը կախված է նաև գրավոր բնագրի հնությունից ու վավերականության աստիճանից: Ծիսապաշտամունքային, իմաստասիրական և օրենսդրական ոլորտներում կարող ենք վերոնշյալ սահմանումը կիրառելի դարձնել՝ հաշվի առնելով, անշուշտ, բանավոր վիճակում դրանց օգտագործման միջավայրերն ու համապետքսը:

Միևնույն ժամանակ բնագրի փոխանցման պարմական մոտեցումը կարևոր նշանակություն ունի Սուրբ Գրքի ուսումնասիրության համար: Այն բացահայտում է տեքստի զարգացումն ու ծագումը, նպատակն ու օգտագործումը հստակ մարմանիչված իրավիճակներում, ինչպես նաև Նին Իսրայելի այլ կառույցներում: Այս մեթոդը լուսաբանում է նաև փոքր միավորների ծագումը, անկախությունն ու շրջանառությունը Նին Կրակարանի գրավոր ավանդության մեջ: Փոխանցման պարմության մեթոդի նպատակն է, ուրեմն, լուսաբանել բնագրի ձևն ու զարգացումն իր նախնական, անգիր շրջափուլում և անել անհրաժեշտ եզրակացություններն այս առումով: Այն գործառնվում է նախ և առաջ վերլուծաբար՝ սկսելով ամենահին և ամբողջական բնագրային տարբերակից, ինչպես որ այն սահմանված է գրավոր վիճակում: Ներագա ուսումնասիրությունները շարունակվում են՝ հիմնականում պարզելու համար, թե ո՞րն է եղել բնագրի անգիր ձևի փոխանցման համապետքսը և ամենաանախական ձևը: Այս առումով մեթոդի հիմնական եզրակացությունն այն է, որ Նին Իսրայելում բնագրերի մեծամասնությունը ծագել է կենդանի և անգիր խոսքի մեջ: Այս բանավոր կարգավիճակով նրանք կրել են նաև հերագա անհրաժեշտ կամ երկրորդական փոփոխությունները:

Համադրման կամ սինթեզի գործընթացում, որն ամբողջովին հիմնվում է բնագրային վերլուծության վրա, ամբողջովին փոխվում է տեքստի ուսումնասիրության ուղղությունը: Այստեղ արդեն փորձ է արվում ուրվագծելու գրավոր փոխանցված տեքստի զարգացման գործընթացը՝ իր ծագման և պարմական համապետքսի մեջ, իր ամենաանախական ու վկայված բանավոր ձևից մինչև ամենահին գրավոր վկայություն¹⁹:

Ե. Ավանդության պարմական ուսումնասիրության մեթոդ (Tradition Historical Approach)²⁰, այս մեթոդի սկզբնակերպն այն պարզ փաստն է, որ յուրաքանչյուր սուրբգրային հեղինակ ապրել է փաստերի միավոր մի իրականության մեջ, որը հստակ մշակված ու գրանցված կանոններ է ունեցել: Ավանդության պարմության հիմնական հարցադրումը վերաբերում է հեղինակի կատարած հաստատումների այն աստիճանին, որտեղ առկա են որոշակի ենթահենքային տարրեր նրա ապրած ժամանակաշրջանի միավոր և մշակութային ոլորտներից: Նմանատիպ դիտարկումը մի պարզ պոստուլատ կամ վերացարկված հաստատում է: Նին Կրակարանի ուսումնասիրողներից շատերը բազմիցս հաստատել են, որ հինկրակարանյան բնագրերում առկա են որոշակի ընդհանրություններ՝ սա վերաբերում է խոսքի պարկերներին, մտքի և գործի միջև եղած տարբերությանը, թեմատիկ ընդհանրություններին և այլն: Վերջապես, անկարելի է չնկատել նույնիմաստ և նույն նշանակություն ունեցող բառերի առատությունն իրարից ժամանակաշրջանով բավական տարբեր

¹⁹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս E. W. Heaton, *The School Tradition of The Old Testament*, Oxford University Press, 1994:

²⁰ Տե՛ս Magne Sæbø, *On the Way to Canon: Creative Tradition History in the Old Testament*, JSOT, Supplement Series 191, Sheffield Academy Press, 1998:

բնագրերում: Այս բոլոր ընդհանրություններն սրելով և՛ և՛ այնպիսի հասարակություններում ու միջավայրերում, ինչպիսիք են, օրինակ, դպիրների ուսումնական շրջանակը, իմաստասիրական դպրոցները, ծիսական գրականությունը, քահանայությունը, օրենսդրական դաշտը, արքայական պալատը, և ժամանակ առ ժամանակ, նաև մարգարեական շրջանակները²¹: Այսպիսով, այս վկայություններն արտահայտված են որոշակի և օրինականացած բառերով, բառապաշարով և ձևակերպված կառուցվածքներով սոցիալ-հասարակական հասարակություններին բնորոշ ավանդական լեզվահամակարգում:

Զարգացման յուրաքանչյուր փուլի համար այս մեթոդը կիրառում է բնագրի վրա բովանդակային ազդեցության (մրավոր, աստվածաբանական կամ կրոնապարմական) բացահայտման համակարգը: Ներկառար, ավանդության ուսումնասիրման սույն մեթոդը սահմանում է մրավոր զարգացման նյութերը, բովանդակային առանձնահատկությունները, հայեցակարգերը կամ հայեցակարգային համակարգերը, որոնք ներառում է բնագրի իր կառուցվածքով, բովանդակությամբ, կամ որոնք ավելացվել են հեղինակ-խմբագրի կողմից: Մասնահատուկ բերքների ուսումնասիրությանը զուգահեռ, և նույնիսկ ավելի լայն ընդգրկումով, ավանդության ուսումնասիրման մեթոդը հիմնական ուշադրությունը սևեռում է համարեքսի վրա՝ ինչպես մրավոր, նույնպես և՛ պարմաստվածաբանական զարգացման առումով: Այն ուսումնասիրում է հիմնականում զանազան հայեցակարգերի պարմությունը՝ ինչպես առանձին-առանձին, այպես էլ ընդհանուր համակարգի մեջ դիտված: Մեծավ մասամբ, այս մեթոդի պարմական ուսումնասիրություններն ունեն շար խիստ մասնագիտական բնույթ, ինչպես որ է պարագան ժանրերի պարմության ուսումնասիրության մեջ:

Հին Կրակարանի մեկնողական մեթոդների այս համառոտ թվարկումը գերակշռող մեծամասնությամբ վերաբերում է նաև Նոր Կրակարանի ուսումնասիրությանը: Ի վերջո պետք է մոռանալ, որ Հին Կրակարանի մեկնության մի կարևոր կողմն է նաև նրա փոխհարաբերությունը Նոր Կրակարանի հետ²²: Նեղ այս փոխհարաբերության բացահայտման շնորհիվ է, որ հնարավոր է դառնում Աստվածաշնչի օգտագործումը քրիստոնեական Եկեղեցում իբրև Սրբազան Նայություն մարդկային հոգու փրկության համար: Հին Կրակարանի վերաբերյալ բոլոր մեթոդներն իրենց զարգացմամբ համեմատաբար նոր շրջանի գիտական մրքին և՛ պարկանում: Սակայն Բրիտանի կերպարի բացահայտումը երկու Կրակարաններում բնորոշ է եղել բոլոր դարերին. այն պարկանում է մեկնողական մեկ այլ, ավելի հոգևոր արվեստին, որին քալիս ենք հայրաբանական կամ քրիստոնեական մեկնաբանություն (patristic exegesis/hermeneutics) պայմանական անունը: Ներկայիս սրա հետ սերտորեն առնչվում է նաև «Հինկրակարանյան աստվածաբանություն» հասկացությունը, որն ավելի ընդգրկուն մի թեմա է՝ կարող նորանոր և ծավալուն ուսումնասիրություններին՝ հայ իրականությանը հինկրակարանյան մրքի առանձնահատկություններին ծանոթացնելու համար:

21 Stü E. A. Knauf, Les milieux producteurs de la Bible hébraïque, in Th. Römer, J.-D. Machi, Ch. Nihan, Introduction à l'Ancien Testament, Labore et Fides, Genève, 2004, էջ 48-60:

22 Stü P. Joyce, The Old Testament and Its Relationship to the New Testament, in J. Rogerson (ed.), Beginning Old Testament Study, Plymouth, 1983, էջ 131-144: